Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ (XXI). *Երևան, «Զանգակ–97» հրատ., 2002, 408 էջ:*

Ողջունելի և նախանձախնդիր հետևողականությամբ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտը լույս ընծայեց վերոնշյալ մատենաշարի հերթական XXI գիրքը, որի հեղինակային կազմում ընդգրկված են հայ արևելագետների տարբեր սերունդներին պատկանող շուրջ երեք տասնյակ հեղինակներ: Թեմատիկ և ժամանակագրական ընդգրկման առումով նույնպես ներշնչող է քննարկվող հատորը, առավել ևս, որ պատկառելի թիվ են կազմում արդիական մեծ հնչողություն ունեցող հոդվածները:

Ճակատագրի և պատմական հանգամանքի բերումով մեզ առաջին հերթին հետաքրքրում են, հարկավ, Թուրքիային և քրդական ազգային-ազատագրական շարժմանը վերաբերող հոդվածները, որոնք զգալի թիվ են կազմում և լայն ընդգրկում ունեն:

Միջազգային հարաբերությունների տեսության տեսանկյունից հատուկ հետաքրքրություն է ներկայացնում Ռ. Սաֆրաստյանի «Հայ-Թուրքական հարաբերությունների ուսումնասիրության նշանակությունը միջազգային հարաբերությունների ժամանակակից տեսության համար. նախնական դիտարկումներ» հոդվածը, որում փորձ է արվում դիտարկել առկա հայ-Թուրքական հարաբերությունները վերը նշված տեսանկյունից: Հեղինակը շեշտը դնում է այն բնորոշ առանձնահատկությունների վրա, որոնք հատկանշում են այդ հարաբերությունները: Ամենակարևոր առանձնահատկությունը հեղինակը, ամենայն իրավամբ, համարում է Թուրքիայի հրաժարումը դիվանագիտական հարաբերություններ հաստատել ՀՀ հետ, այն էլ այն դեպքում, երբ ճանաչել է վերջինիս իբրև անկախ և ինքնիշխան պետություն: Հեղինակը ուշադրություն է հրավիրում մի կարևոր հարցի վրա, որը կարող է հնարավորություն ընձեռել Թուրքիային ընդլայնելու իր գործողությունների շրջանակը, այն է՝ Թելադրել միջպետական հարաբերությունների օրակարգը և դրանով իսկ հաստատել իր վերահսկողությունը ՀՀ-ի վրա. Հայց ինչպես իրավացիորեն նշում է Ռ. Սաֆրաստյանը, 1998 Թ. հայերի ցեղասպանության ճանաչման հարցի բարձրացումը և այդ կապակցությամբ Թուրքիայի ջղաձգությունները ցույց են տալիս, որ «ոչ համաձայնագրային» հարաբերությունների դեպքում երբեմն ավելի Թույլ կողմն էլ կարող է որոշակի առավելության հասնել դիվանագիտական դիմակայության մեջ:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում «Միջքրդական հակամարտությունների պատճառների հարցի շուրջ» խորագիրը կրող հոդվածում Մհոի Շաքրոյի դիտարկումները: Գաղտնիք չէ, որ ներկայումս ընթացող տարածաշրջանային հիմնահարցերի զարգացումների մեջ ՀՀ և հայ ժողովրդի համար շահագրգիռ հետաքրքրություն է ներկայացնում քրդական ազգային-ազատագրական շարժման և դրա հեռանկարների խնդիրը: Հեղինակը փորձում է ցույց տալ այդ շարժման մեջ եղած հակասությունների և հակամարտությունների ակունքներն ու շարժառիթները, վերլուծել այն պատճառները, որոնք այժմ ընկած են քրդական բախումնային իրադարձությունների հիմքում: Հեղինակը հիմնավոր կերպով ամենից առաջ ուշադրություն է հրավիրում կրոնական գործոնի վրա, ելնելով այն հիմնադրույթից, որ իսլամը մեծապես քաղաքականացված կրոն է: Այս պարագային գումարվում է այն իրական հանգամանքը, որ քրդերը իրենց մասնատված հայրենիքով ընկած լինելով չորս հավատակից պետությունների միջև, մեծապես դժվարանում են գերակայություն տալ ազգային շահերին և դրանով իսկ հաղթահարել կրոնական գործոնի բացասական ազդեցությունը: Ինչպես ճիշտ նկատում է Մհոի

Շաքրոն, գրան գումարվում է մեծ տերությունների պայքարը Մերձավոր և Միջին Արևելքում իրենց քաղաքական անբաժան ազդեցությունը հաստատելու, ինչպես նաև Քրդստանի մասերի տիրապետող, երբեմն նույնիսկ թշնամական պետությունների միացյալ հանգես գալը քրդական ազգային-ազատագրական շարժման դեմ:

Բնութագրելով միջքրդական բախումները, հեղինակը գտնում է, որ դրանք պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ ավանդական և ժամանակակից: Ավանդականը՝ հնից ի վեր եկող բախումնային հարցերի կարգավորումն էր ցեղերի և ցեղախմբերի միջև բռնի կամ խաղաղ եղանակով, իսկ ժամանակակից՝ դեմոկրատական և ձախ արմատական կուսակցությունների միջև ընթացող անդիջում հակամարտությունն է, ընդ որում ցույց է տրվում վերջիններիս բացասական դերը, որքանով որ նրանք սոցիալական խնդիրները վեր են դասում ազգային հրատապ խնդիրներից: Հեղինակը դրական է գնահատում Իրաքյան Քրդստանի ինքնավարության կազմավորումը իբրև ճեղքում ազգային-ազատագրական խնդիրների իրականացման ճանապարհին:

Վերոհիշյալ խնդրին է առնչվում Վ. Բայբուրդյանի «20-րդ դարի 20–30-ական թվականների քրդական ապստամբությունները և Թուրք-իրանական հարաբերությունները» հոդվածը: Մատնանշելով այն տխուր իրողությունը, որ 1923 թ. Լոզանի խորհրդաժողովը, ընդառաջելով քեմալական ազգայնամոլներին, միջազգային հարաբերությունների օրակարգից հանեց Հայաստանի և Քրդստանի հիմնահարցերը, հեղինակը ցույց է տալիս այն երկակի քաղաքական ընթացքը, որ որդեգրեցին Թուրք ազգայնամոլները, այն է՝ խրախուսել մի կողմից քրդերի պայքարը Իրանի և Իրաքի դեմ, իհարկե, հեռագնա նպատակներով, իսկ մյուս կողմից Թուրքական Քրդստանում վարում էին պետական ահաբեկչություն, ազգային և սոցիալական ճնշումների քաղաքականություն, անթաքույց կերպով առաջնորդվելով «Թուրքիան Թուրքերի համար» ազգայնամոլական կարգախոսով: Բնականաբար, և՛ երիտթուրքերի և՛ ապա քեմալականների կողմից չարաչար խաբված քրդերը ապստամբեցին քեմալական Թուրքիայի դեմ: Հեղինակը հանգամանորեն լուսաբանում է Շեյխ Սայիդի 1925 թ. և Արարատ լեռան շրջանում 1927–1931 թթ. ապստամբությունները, որոնք Թուրքիան ճնշեց մեծ դժվարությամբ: Հոդվածում կարևոր տեղ է հատկացված «Հոյբուն» («Անկախություն») ռազմաքաղաքական կոմիտեի գործունեությանը Թուրքիայի տարածքում անկախ Քրդստան ստեղծելու նպատակով, ինչպես նաև «Հոյբունի» և Հ.Յ. Դաշնակցության փոխհամաձայնությանը՝ Սևրի պայմանագրի հիմքի վրա ստեղծելու անկախ Հայաստան և անկախ Քրդստան:

Վ. Բայբուրդյանը քննության է առնում նաև Քեմալ Աթաթուրքի և Ռըզա շահ Փեհլևվիի կառավարությունների միջև կնքված համաձայնությունը՝ քրդական շարժումների դեմ համատեղ պայքար մղելու մասին: Այդ երկու երկրների քաղաքական ու ռազմական համագործակցությունը հնարավոր դարձրեց հիշյալ ժամանակահատվածում ճնշել քրդական ազատագրական շարժումները:

Ն. Հովհաննիսյանի «Օսմանյան կայսրությունում Հայկական հարցի լուծման լիբանանյան մոդելը» հոդվածում քննության է առնվում 1912 թ. Հայկական հարցի վերաբացման կապակցությամբ բանակցությունների արդյունքում 1914 թ. հունվարի 26-ին ստորագրված ռուս-թուրքական համաձայնագրի հիմքում ընկած, այսպես կոչված, «լիբանանյան մոդելը»: Դիտարկելով Հայկական հարցի զարգացումները մինչև 1914–1918 թթ. Առաջին համաշխարհային պատերազմը և այդ տարիներին ցեղասպանության ճանապարհով Հայկական հարցի «թուրքական մոդելով լուծումը», հեղինակը միանգամայն իրավացի է, երբ փաստական անառարկելի հիմքի վրա ցույց է տալիս, որ հակառակ թուրքական ստահոդ պնդումների, հայերը ցանկացել են Հայկական հարցը լուծել Օսմանյան կայսրության շրջանակներում: Դրա լավագույն և ծանրակշիռ ապացույցն են հայկական կողմի միջնորդությամբ Հայկական հարցի վերաբացումը և 1914 թ. հունվարի 26-ի համաձայնագիրը: Ն. Հովհաննիսյանը իրավա-

ցիորեն գտնում է, որ գա Հայկական հարցի լուծման ուղղությամբ ձեռնարկված ամենալուրջ միջոցառումն էր, որի կենսագործումը ձախողեց Առաջին աշխարհամարտը:

Հատուկ հետաքրքրություն է ներկայացնում Ռ. Ղազանջյանի «Խորհրդաքեմալական հարաբերությունները 1920 թ. և Հայաստանի խնդիրը մոսկովյան արխիվների գաղտնի փաստաթղթերի լույսի ներքո» ընդարձակ հոդվածը: Հեղինակն օգտագործել է փաստաթղթեր, որոնք այժմ հնարավոր է դարձել դնել դիտական շրջանառության մեջ և նոր լույս սփռել խորհրդային-քեմալական հարաբերությունների առ այսօր անհայտ մնացած մանրամասների վրա: Հենվելով մասնավորապես Խորհրդային Ռուսաստանի արտգործժողկոմ Գ. Վ. Չիչերինի դրությունների վրա, Ռ. Ղազանջյանը փորձում է ժխտել, իր իսկ արտահայտությամբ, Խորհրդային Ռուսաստանի և քեմալականների միջև «բարեկամության և եղբայրության առասպելը» և նրանց համատեղ հանդես դալը Անտանտի դաշնակից Հայաստանի դեմ:

Ամենևին կասկածի տակ չառնելով, որ Ռ. Ղազանջյանի շրջանառության մեջ դրած նյութերը բացառիկ կարևորություն ունեն խորհրդային-քեմալական հարաբերությունների 1920 թ. ժամանակահատվածի ճշմարիտ լուսաբանման համար, ուզում ենք, սակայն, ուշադրություն հրավիրել այն հանգամանքի վրա, որ ոչ բոլոր խորհրդային գործիչներն էին մտածում և գործում Գ. Վ. Չիչերինի պես, կովկասում գտնվող խորհրդային գործիչները ո՛չ միանշանակ էին գործում և ո՛չ էլ ժամանակին ու ճշգրիտ տեղեկատվություն հաղորդում, առավել ևս, որ նրանցից շատերն ազգությամբ վրացիներ էին... Իհարկե, կասկած չկա, որ թուրքական առաջխաղացումը ձեռնտու չէր Խորհրդային Ռուսաստանին, բայց և չմոռանանք, որ վերջինս էր, որ Հայաստանի վզին փաթաթեց Մոսկվայի և Կարսի 1921 թ. պայմանագրերը:

Արդի Թուրքիայի քաղաքական և հասարակական զարգացումներն ըմբռնելու տեսանկյունից մեծ հետաքրքրություն է ներկայացնում Ս. Բաղդասարյանի «Բանակի դերը 1960–90-ական թվականների Թուրքիայի նորացման գործընթացում» հոդվածը: Նախքան բուն հոդվածին անցնելը, վերնագրում «նորացում» տերմինի կապակցությամբ ուզում ենք նշել, որ կան տերմիններ, որոնք հարկ չկա թարգմանել և որոշ առումով բովանդակազրկել: Մեր կարծիքով «մոդեռնիզացիան» սոսկ «նորացում» չէ, քանզի առաջինն իր մեջ պարունակում է երանգներ, որոնք «նորացումը» չունի: Ասենք նաև, որ հոդվածը ռուսերեն լեզվով է և տերմինը ճիշտ է օգտագործված, խոսքն այստեղ բովանդակության հայերեն տեքստի մասին է: Ի միջի այլոց, նույն հոդվածի վերնագիրը բովանդակության ռուսերեն տեքստում աղավաղված է, փոխանակ "Роль армии..." տպագրված է "Роль Армении...": Հոդվածում ցույց է տրվում, որ 1960–1990-ական թվականների մոդեռնացումը կոչված էր նոր բովանդակություն հաղորդելու թուրքական պետությանն ու քաղաքական համակարգին՝ դեմոկրատական և իրավական պետության գաղափարներով, որը, սակայն, ձևական բնույթ էր կրում: Եվ դա ինքնըստինքյան հասկանալի է, քանզի դեմոկրատիայի և քաղաքացիական հասարակության սկզբունքները հռչակած թուրքական հանրապետությունը, ըստ էության, չունի դեմոկրատական գծեր և կառավարող ընտրախավն ինքը չի հետևում ամենևին «խաղի կանոններին», որն, անշուշտ, առաջին հերթին ձեռնտու է զինվորականությանը, ավելի ճիշտ՝ բանակի վերնախավին, որը սրբությամբ պահպանում է և օգտագործում դեռևս Քեմալ Աթաթուրքի ժամանակ հաստատված «թաբուների» համակարգը, որոնցից կարևորագույններն են մշակութային և էթնիկական բազմազանության մերժումը և խզումը իսլամական ժառանգության հետ: Եվ որքանով որ զինվորականությունը դիտվում է իբրև «թաբուների» պահապան, ուստի բանակի դերը թուրքական պետության և հասարակության կյանքում որևէ քննարկման և վերանայման ենթակա չէ: Մոդեռնացման շրջանակների ընդլայնման ամեն մի փորձ, հիշյալ թվականներին, հանդիպել է բանակի խստիվ միջամտությանը քաղաքական կյանքին: Հեղինակն իրավացիորեն նկատում է և հիմնավորում, որ մոդեռնացումը,

որը, բնականաբար, ենթադրում է քաղաքացիական իրավունքների, դեմոկրատիայի ընդլայնում, ուրբանացում և տնտեսության չուկայականացում, 1970-ական թվականների վերջերին հանգեցրեց սոցիալ-քաղաքական ձախողման, ծայրահեղականության ու քաղաքական ահաբեկչության, ձախ ու աջ ծայրահեղականների բախումների ու փողոցային կռիվների, որը վկայությունն էր քաղաքական ուժերի անընդունակության առաջնորդվելու երկրի շահերով, ուստի կրկին թատերաբեմ իջավ բանակը և 1982 թ. Սահմանադրությամբ ստեղծվեց մի սահմանափակ և բանակի հոգաբարձության տակ գտնվող վարչակարգ, որտեղ կան ազատ ընտրություններ, բազմակուսակցական համակարգ, պառլամենտ, մամուլ, բայց իրական իշխանությունը քաղաքացիական, դեմոկրատական վերահսկողության տակ չէ: Հեղինակն իրավացիորեն մատնանշում է, որ Թուրքիայում պետության միասնությունը առանց զինվորականության, լուրջ սպառնալիքի տակ կլինի, բայց և այժմ Թուրքիան գտնվում է խաչմերուկում, որտեղ դժվարին ընտրություն պետք է կատարի իր ներկա ինքնության և XXI դ. զարգացման ուղիների միջև:

Ռ. Կարապետյանի և Ա. Հովհաննիսյանի հոդվածները նվիրված են Իսրայելի և Պաղեստինի տարածաշրջանում ընթացող զարգացումներին: Ռ. Կարապետյանի «Պայքարի նոր փուլ Պաղեստինի համար» հոդվածում քննարկվում են Իսրայել-Պաղեստինի ինքնավարություն փոխհարաբերություններին առնչվող խնդիրները, որոնք արդեն ավելի քան կես դար ալեկոծում են հիշյալ տարածաշրջանը: Ելնելով Ա.Շարոնի կառավարության անզիջում քաղաքական կեցվածքից, հեղինակը, մեր կարծիքով իրավացիորեն, գտնում է, որ կայուն խաղաղության հաստատման նախաձեռնություն բնավ չի գա Իսրայելից և որ անհրաժեշտ է միջազգային հասարակայնության հաստատուն միջամտությունը, որը միայն կարող կլինի, հեղինակի խոսքերով «փրկել Պաղեստինն ու նրա մարտնչող ժողովուրդը «երկաթե» պատով ջախջախվելու դաժան հեռանկարից» (էջ 48):

Ա. Հովհաննիսյանի «Երուսաղեմի կարգավիճակի հարցը ՄԱԿ-ում» հոդվածը նվիրված է առայսօր էլ Իսրայելի և նրա արաբական հարևանների և հատկապես Պաղեստինի հետ հարաբերություններում կովախնձոր հանդիսացող Երուսաղեմի կարգավիճակի հարցին: Համառոտակի անդրադառնալով Երուսաղեմի կարգավիճակի շուրջ զարգացումներին, մասնավորապես ՄԱԿ-ի բանաձևերով Երուսաղեմն իբրև «անջատ մարմին» (corpus separatum) ճանաչելուն, հեղինակը խոսում է 1980 թ. հուլիսի 30-ին Իսրայելի Կնեսետի կողմից Երուսաղեմը Իսրայելի մայրաքաղաք հռչակելու մասին, որից հետո անդրադառնում է 2000 թ. հուլիսի 11–24-ին Քեմփ Դեյվիդում ընթացած իսրայելա-պաղեստինյան բանակցություններին, որոնք ավարտվեցին անարդյունավետ՝ քաղաքի բաժանման փորձը ձախողվեց: Այժմ ստեղծվել է մի իրավիճակ, երբ քաղաքը փաստորեն գտնվում է Իսրայելի վերահսկողության տակ, պաղեստինցի արաբները շարունակում են Արևելյան Երուսաղեմը համարել իրենց մայրաքաղաք, իսկ ՄԱԿ-ի բանաձևերը քաղաքին տրամադրել են միջազգային կարգավիճակ: Նման հակասական իրադրության մեջ հեղինակը կարծում է, որ տվյալ հիմնախնդրում թերևս լավագույն տարբերակ կարող է լինել ԱՄՆ-ի նախկին նախագահ Բիլլ Քլինթոնի 2000 թ. դեկտեմբերի 24-ին առաջարկած նախագիծը, ըստ որի Արևելյան Երուսաղեմը բաժանվելու է երեք մասի՝ մուսուլմանական, հայկական կամ քրիստոնեական և հրեական: Այս վերջին երկուսը մնալու էին Իսրայելին, նևրառյալ և Արևմտյան պատը:

Ա. Ստամբոլցյանի «Իրանի նկատմամբ Միացյալ Նահանգների քաղաքականությունը Մեհդի Բազարգանի կառավարման շրջանում» հոդվածն ընդգրկում է 1979 թ. փետրվարի 1-ից նոյեմբերի 6-ն ընկած ժամանակաշրջանի իրանա-ամերիկյան հարաբերությունների պատմությունը: Հեղինակը ներկայացնում է ԱՄՆ-ի ճիգերն իր նախկին դիրքերը և ազդեցությունը Իրանում պահելու և բոլոր այն կարևոր գործոնները, որոնք հանգեցրին ԱՄՆ-ի շարունակական ջանքերի ձախողմանը, նոյեմբերի 4-ին ա-

մերիկյան դեսպանատունը Թեհրանում պատանդ վերցնելուն և երկու օր անց Մեհդի Բազարգանի հրաժարականին ու ԱՄՆ-ի հետ հաշտության եզրեր գտնելու նրա կառավարության քաղաքականության վախճանին:

Նշանակալի թվով հոդվածներ անմիջականորեն առնչվում են հայոց պատմության հիմնահարցերի: Կիլիկյան Հայաստանում պետության և եկեղեցու փոխհարաբերություններին է նվիրված Ա. Բոզոյանի հոդվածը «Պետության և կաթողիկոսարանի փոխհարաբերությունները Կիլիկյան Հայաստանում (նախամոնղոլական շրջան)» խորագրով: Հարցն ինքնըստինքյան գիտական մեծ կարևորություն ունի, եթե նկատի ունենանք, որ քննարկվող ժամանակաշրջանում հայոց կաթողիկոսարանը գտնվում էր Հալեպի աթաբեկության սահմաններում Հռոմկլայում, բայց գործուն մասնակցություն էր բերում հարևան հայկական իշխանությունների քաղաքական և հոգևոր-մշակութային կյանքին: Բնական է միանգամայն, որ Կիլիկիայի հայոց պետականության ամրապնդմամբ և բարձրացմամբ այդ համազգային հաստատությունը պետք է գրավեր կիլիկյան հայ տիրակալների ուշադրությունը, մանավանդ այնպիսի մի կենսական հարցի լուծման ուղղությամբ, որպիսին է Մեծ Հայքում հայկական պետականության վերականգնումը և Կիլիկիայի հետ միասին ընդհանուր թագավորության ստեղծումը: Բայց չի կարելի համաձայնել հեղինակի այն անհիմն պնդման հետ, որ «պետության և եկեղեցու փոխհարաբերությունները երբեք մասնագիտորեն չեն հետազոտվել հայ պատմագրության կողմից» (էջ 169): Մի՞թե կարելի է նման բան պնդել, երբ հրապարակի վրա կա Մաղաքիա արքեպ. Օրմանյանի նշանավոր «Ազգապատումը», որտեղ ամենայն մանրամասնությամբ սկզբից մինչև վերջ քննարկվում է նաև հիշյալ «մասնագիտորեն չհետազոտված» հարցը: Այնուհետև, ժամանակի կոնկրետ քաղաքական խնդիրների լուծումը և դրա հետ կապված դավանական բնույթի որոշ զիջումների գնալու քաղաքական խնդիրը Ա. Բոզոյանը ընդհանրացնում է և համարում, որ «Լևոն Ա. Ռուբինյանի իշխանապետության և ապա թագավորության տարիներին, Կիլիկիայի Հայկական պետությունը փորձեց կաթողիկոսարանին պարտադրել իր իշխանությունը: Այդ պայքարը բավական երկար տևեց, ունենալով հաճախ սուր դրսևորումներ» (էջ 173): Հեղինակի կարծիքով այդ պայքարի առաջին զոհ պետք է համարել Գրիգոր Դ. Տղային: Կարծում ենք, որ նման պատասխանատու եզրակացության հիմքեր չեն տալիս ոչ Ա. Բոզոյանի վկայակոչած հեղինակները և ոչ էլ Գրիգոր Դ. Տղայի և իշխանապետ Լևոն II-ի հարաբերությունները, մանավանդ որ կաթողիկոսը ամեն կերպ սատարում էր Լևոն II-ի քաղաքական ընթացքին: Թերևս բացառությամբ Գրիգոր Ե. Քարավեժի խորհրդավոր մահվան հանգամանքների, Ա. Բոզոյանի բերած վկայությունները՝ ապացուցելու իր վերոհիշյալ դրույթը, հիմնավորված չեն: Հովհաննես Զ. Սսեցու և Լևոն II-ի բախումը զուտ անձնական հողի վրա է եղել և նման պայքարի ոչ մի հետք չկա: Ինչ վերաբերում է Ա. Բոզոյանի կողմից արված առաջարկին, թագավոր դառնալուց հետո Լևոն II-ին Լևոն I կոչել, գտնում ենք անհիմն, որովհետև դրանով կհակասենք Լևոն անունը կրող իշխանների և թագավորների արդեն ընդունված ավանդական դարձած համարակալումը և չփոթությունների մեծ դուռ կբացենք: Էջ 171-ում հեղինակն օգտագործում է հետևյալ բառակապակցությունը՝ «Ամենայն Հայոց կաթողիկոսարանը Կարմիր վանքում», որ ժամանակավրեպ է և սխալ, որովհետև այդ ժամանակ դեռ չկար «Ամենայն Հայոց կաթողիկոսություն»: Առավել ևս սխալ է «Ամենայն Հայոց կաթողիկոսարան» արտահայտությունը կամ տերմինը:

Անշուշտ, դիտական մեծ կարևորություն է ներկայացնում վաստակաշատ ուրարտագետ Ն. Հարությունյանի «Նոր ընթերցումներ և մեկնաբանություններ Այանիսի Նորահայտ ուրարտական սեպագրում» հոդվածը, որում հեղինակը ստուգաբանում է զոնը բառեր՝ iserhini, sinini և sisini: Ն. Հարությունյանն առաջարկում է այդ բառերը համապատասխանաբար ընթերցել՝ «բնակելի դարձրեց», «այն ժամանակ» և «հիշյալ»: Համադրելով ուրարտական տար-

բեր արձանագրություններ, Ն. Հարությունյանը համոզիչ կերպով հիմնավորում է իր մեկնաբանությունները:

Հին պատմության հիմնահարցերին է վերաբերում Ա. Քոսյանի «Իսուվայի կրոնական կենտրոնները խեթական դարաշրջանում» հոդվածը, որը վերաբերում է խեթական պետության մայրաքաղաք Խաթթուսասի պեղումների ընթացքում հայտնաբերված ծիսապաշտամունքային բնույթի երկու տեքստերի, որոնք, ինչպես հեղինակն է հավաստում, «առաջին անգամ են հրապարակվում գիտական տառադարձմամբ և թարգմանաբար» (էջ 315): Տեքստերում հիշատակված են Իսուվայի (հետագայի Ծոփքի) Վատարուսնա և Սուլլամա քաղաքները, որոնք, ըստ խեթական արձանագրությունների, եղել են տարածաշրջանի աչքի ընկնող կրոնական կենտրոններ, որտեղ պաշտվել են Վատարուսնայի աստվածը և Սուլլամայի ամպրոպի աստվածը: Հոդվածում կարևորվում է Իսուվայի գերը և դիրքը խեթական տերության համակարգում:

Ա. Մովսիսյանը հանդես է եկել «Օտարների կողմից նախամաշտոցյան Հայաստանում թողնված գրավոր հուշարձանները և դրանց պատմական նշանակությունը» հոդվածով: Հեղինակը ներկայացնում և քննության է առնում Հայաստանի տարածքում հայտնաբերված, սակայն օտարների կողմից ստեղծված բնագրերը: Գովելի է, որ հեղինակը փորձ է անում համակարգել օտարագիր և օտարների կողմից թողնված արձանագրությունները զանազան իրերի և հուշարձանների վրա: Հայաստանում հայտնաբերվել են նման արձանագրություններ և մակագրություններ աքքադերեն, խուռիերեն, հին, միջին և նոր ասորեստանյան, հին և միջին բաբելոնյան, պարսկական (աքեմենյան), էլամական բևեռագրերով, եգիպտոսյան մեհենագրերով, ինչպես նաև ավելի ուշ ժամանակներում հունարեն և լատիներեն: Կարևոր է այն, որ հեղինակը միաժամանակ փորձ է կատարում արժևորելու դրանք:

Ե. Գրեկյանի հոդվածը «Ուռուշի ճակատամարտը (պատմահամեմատական վերլուծություն)», նվիրված է, ինչպես վկայում է վերնագիրը, Սարդոն II-ի գահակալության ութերորդտարվա (մ.թ.ա. 714 թ.) արշավանքին, որի գլխավոր ճակատամարտը կայացավ Ուռուշում: Հեղինակն այն տեսակետն է հիմնավորում, որ այստեղ, հակառակ տարածված կարծիքի, ճակատային բախում տեղի չի ունեցել, Սարդոնը կարողացել է թափանցել Ռուսա II-ի բանակի թիկունքը և հարվածել թիկունքից: Հեղինակը ընդհանրություններ է տեսնում մ.թ.ա. 69 թ. հոկտեմբերի 6-ի Տիգրանակերտի ճակատամարտի և Ուռուշի ճակատամարտի միջև: Հեղինակը դրսևորում է խորաթափանցություն և դրված հիմնահարցի տրամաբանական լուծման կարողություն:

Ք. Կոստիկյանը հանդես է եկել «Կաթոլիկական քարոզչությունը Իրանում և հայ իրականությունը» կարևոր հոդվածով, որտեղ տարալեզու աղբյուրների և գրականության լայն օգտագործումով բացահայտում է կաթոլիկական քարոզչության դեմ իրանահայության մղած համառ և հետևողական պայքարը: Հոդվածի արժեքը մեծապես բարձրացնում է այն պարագան, որ հոդվածում բերված են շահ Սուլթան Հուսեյնի 1710 և 1712 թթ. հրովարտակների պարսկերեն բնագրերն ու դրանց թարգմանությունը: Ուրախալի է, որ հայ արևելագիտության ասպարեզ մուտք է գործել օժտված մի գիտնական:

Ինչ վերաբերում է որոշակի ժամանակներում Սեֆյան շահերի կողմից կաթոլիկներին հովանավորելու խնդրին, ապա դա իրավացիորեն բացատրվում է շահական կառավարության արտաքին քաղաքական շահագրգռություններով: Բայց, տարօրինակ կերպով, Կոստիկյանը զանց է առել ժամանակակից և այնպիսի ճշտապատում մի հեղինակի, որպիսին է Առաքել Դավրիժեցին: Ք. Կոստիկյանը գրում է. «Կաթոլիկ միսիոներների դրդմամբ և հայ եկեղեցին Հռոմին ենթարկելու նպատակով նա անդամ (Շահ Աբասը – Վ. Դ.) Էջմիածնի վանքը քանդելու ու նրա քարերով Սպահանում նոր կաթոլիկական եկեղեցի կառուցելու հրաման է արձակում, որը բարեբախտաբար չի իրագործվում» (էջ 202): Ա. Դավրիժեցին իր «Պատմության» ԺԷ գլխում «Թե ինչպես կամ ինչ պատճառով Սպահան քաղաք տարան մեր լուսավորիչ Ս. Գրիգորի աջը և

սուրբ աթոռ Էջմիածնի քարերը», բոլորովին այլ և միանգամայն բանական բացատրություն է տալիս այդ կետին, այն է՝ հայերին կապել իրենց նոր «հայրենիք» Պարսկաստանի հետ և ոչ թե հայերին կաթոլիկ դարձնել: Հնարավոր չէր, որ Ա. Դավրիժեցին չիմանար իրադարձությունների իսկական շարժառիթը կամ միտումնավոր լռության մատներ այն: Եվ վերջին հաշվով ժամանակի ընթացքում հայերին մահմեդականացնել ձգտող Շահ Աբբաս I ինչու՞ պետք է նրանց կաթոլիկացներ, Հռոմի իրավասության տակ դնելով և դրանով իր գործը բարդացներ: Կրկնում ենք, Ս. Էջմիածնի տեղափոխության խնդիրը հայերին Պարսկաստանի հետ կապելու միջոց էր և ուրիշ ոչինչ: Հոդվածում կան նաև որոշ փաստական անճշտություններ: Խոսվում է, օրինակ, «Ֆրանսիայի կայսրի» (էջ 202) և «Լյուդովիկոս XIV կայսրի» (էջ 204) մասին, մինչդեռ ճիշտը «թագավոր» տերմինի օգտագործումն է:

Բավական ընդարձակ և փաստական շահեկան նյութով ու գիտական մեծ արժեք ներկայացնող ծանոթագրություններով հագեցած հոդված է տպագրել Պ. Զոբանյանը՝ «Հայ-վրացական հարաբերությունները XVIII դարի երկրորդ կեսին և հայ քաղաքական միտքը» խորագրով: Պ. Զոբանյանի ամենակարևոր ձեռքբերումներից է Սիմեոն Երևանցի կաթողիկոսի հասարակական-քաղաքական գործունեության դնահատականի հարցում հիմնավորված մոտեցումը, որպես ազգային-ազատագրական շարժման խոհեմ և եռակի մի գործչի: Սակայն հեղինակի մոտ հանդիպում են նաև առարկություն հարուցող դրույթներ: Այսպես, Հակոբ Ե Շամախեցի կաթողիկոսի Ելիզավետա Պետրովնա կայսրուհուն հղած 1760 թ. հունիսի 16-ի դրությունից բերված քաղվածքն աղավաղված է: Պ. Զոբանյանը գրում է. «Ուշագրավ վավերագիր է Հակոբ Շամախեցի կաթողիկոսի նամակը Ելիզավետա թագուհուն՝ Թեյմուրազ երկրորդի խնդիրներին ընդառաջելու միջնորդությամբ, քանզի, ինչպես կաթողիկոսն է արձանագրում «նախ աստուծոյ և ապա դոցա պահպանութեամբն կամ այժմ» (էջ 279, ընդգծ. մերն է – Վ. Դ.): Իրականում Հակոբ Շամախեցին հետևյալն է գրում. քաղվածքը բերում ենք ավելի ընդարձակ, որպեսզի ճշմարտությունը պարզ լինի. Թեյմուրազը և Հերակլը «...անհանգիստ մարմնով զցայգ և զցերեկ ընդդիմացան և ընդդիմանան ևս լեզկեաց և յաղթեցին ևս բազում անգամ, սակայն ոչ կարացին զոտս նոցա խափանել իսպառ ի գալոյ յերկիրն իւրեանց և այժմ ևս որդի դորին միշտ է ի մրցմունս այնց հաւատոյ հակառակ թշնամեացն և մնացեալ քրիստոնեայք թէ հայք և թէ վիրք և թէ այլազգիք ևս, զի զնոսա ևս գերեն, նախ աստուծոյ և ապա դոցա պահպանութեամբն կան այժմ...» (ընդգծ. մերն է – Վ. Դ.) (Армяно-русские отношения, в XVIII в., сб. док., IV, Е., 1990, с. 21): Միայն մեկ տառի վրիպակ, բայց բոլորովին այլ բովանդակություն, այլ պատկեր...: Ինչպես տեսնում ենք, իսկական տեքստը ազատում է Ամենայն հայոց կաթողիկոսությունը վրաց արքունիքի պաշտպանությունից: Հեղինակն առաջնորդվում է սույն հոդվածում այն ելակետով, որ «հայ քաղաքական միտքը հայոց ազատագրական ծրագրերում մշտապես կարևոր տեղ է հատկացրել Վրաստանին և հայ-վրացական հարաբերություններին» (էջ 277): Ի նկատի ունենալով Նադիր Շահի սպանությունից հետո ստեղծված քաղաքական նոր իրադրությունը Պարսկաստանում, Պ. Զորանյանը գրում է. «Ստեղծված նոր պայմաններում ևս հայ քաղաքական միտքը ձևավորող գործիչները շարունակում էին հայ-վրացական հարաբերությունները ընկալել ավանդական ձևով՝ Վրաստանի հզորացումը երաշխիք համարելով Հայաստանի ազատագրության համար և ոչ միայն համաձայնել, այլև անգամ փրկություն համարել Հայաստանը վրաց թագավորության կազմի մեջ տեսնելը՝ այն պատկերացնելով, սակայն որպես հայ-վրացական միասնական պետություն: Այդ տեսակետը, որ միանգամայն համահունչ էր վրաց իշխանությունների շահերին ու հավակնություններին՝ տարածելու իրենց ազդեցությունը հայոց նկատմամբ և ձեռնտու էր հայոց օժանդակությունը ստանալու առումով, նպաստավոր ձևով օգտագործվում էր վրաց պետության կողմից իր ներքին ու արտաքին քաղաքականության

ձևավորման ժամանակ» (էջ 279): Այստեղ նշենք, որ հայ-վրացական միացյալ քրիստոնեական թագավորություն ստեղծելու գաղափարը պատկանում էր ռուսական կառավարությանը և ծնունդ էր առել դեռևս Պետրոս I-ի ժամանակներում, այնպես որ, կարծում ենք, ճիշտ չէ այն «ավանդական» համարել: Կարծում ենք չափազանցված է Վրաստանի դերը Այսրկովկասում, ինչու և իրականությունից հեռու ենք համարում հետևյալ տողերը «Հայ-վրացական միացյալ թագավորության ստեղծման գաղափարը, այսպիսով, կարող էր իրատեսական համարվել մինչև 1770-ական թվականների վերջը, երբ Այսրկովկասում դեռևս ոչ մի այլ պետություն փոխարինելու չէր եկել Վրաստանին» (էջ 290, ընդգծ. մերն է – Վ. Դ.):

Քննարկվող հատորում հետաքրքիր հոդվածներ ունեն նաև Ազատ Համբարյանը, Մաքսիմ Խամոյանը, Մարգարիտա Խաչիկյանը, Կառլեն Զաչանյանը, Աշոտ Սահակյանը, Սամվել Մուրադյանը, Անուշ Հովհաննիսյանը, Կարինե Սամվելյանը, Արթուր Մաթևոսյանը, Կարինե Ավետյանը և Ներսես Մկրտչյանը:

ՎԱԼՏԵՐ ԴԻԼՈՅԱՆ